

ՀՀ գեղարքուիսիքի ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ  
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"  
RA MARZ GEGHARKUNIK LLC "ARMAN-EREM"

ք.Գավառ, Գ. Միքայելյան 19 հեռ.  
Микаелян 19 тел. (093) 19-66-68  
с.Gavar. G. Mikaelyan 19, tel. (093) 19-66-68

էլ. փոստ.armanerem@mail.ru Գառ. Դ.

№ 03/26-34

«02» մարտի 2026թ.

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավար  
պարոն Ա. Աղաբաբյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության Կոմիտեի կողմից տրված լիցենզիա ՔՊԼ-000783-09) դիտարկելով Նոյեմբերյան համայնքի Բազրատաշեն բնակավայրի 7-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը երաշխավորում է համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 87799,8 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր 3 թերթ:

Տնօրեն՝



Յու. Ավետիսյան



«Արման-Երեմ» ՍՊԸ



ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 03/26-34

Ըստ Նոյեմբերյան համայնքի Բազրատաշեն բնակավայրի 7-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի.

Պատվիրատու՝ Նոյեմբերյանի համայնքապետարան  
Նախագծող՝ «ՃԱՆՆԱԽԱԳԻԾ» ԻՆՍՏԻՏՈՒՏ ՍՊԸ

Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման համար հիմք է ծառայել.

- ❖ Նոյեմբերյանի համայնքապետարանի հետ կնքված պայմանագիրը.
  - ❖ Ճարտարապետահատակագծային առաջադրանքը.
  - ❖ Ինժեներաերկրաբանական եզրակացությունը.
  - ❖ Տախտմետրական հանույթը.
  - ❖ Ինժեներական ենթակառուցվածքների մատակարար կազմակերպությունների հետ համաձայնեցումները.
  - ❖ Փաստացի չափագրման արդյունքները.
- Փորձաքննության է ներկայացված՝
- ❖ Նախագիծ.
  - ❖ Նախահաշիվ.

Համաձայն նախագծի Նոյեմբերյան համայնքի Բազրատաշեն բնակավայրի 7-րդ փողոցի գոյություն ունեցող ասֆալտբետոնե ծածկը գտնվում է ոչ բավարար վիճակում: Առանձին հատվածներում երթևեկելի մասը քայքայված վիճակում է, առկա են ցանցաձև ճաքեր, որն և խոչընդոտում է երթևեկության կանոնավոր անցանելիությանը: Անմխիթար վիճակում են նաև երթևեկության կազմակերպման ու անվտանգության տարրերը:

Նախագծային աշխատանքները իրականացվել են հաշվի առնելով փողոցի հնարավոր լայնությունները: Երթևեկելի մասի ասֆալտապատման լայնությունը փողոցում կազմում է 7.0 գծմ: Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված է իրականացնել ճանապարհային ծածկի կառուցում: Ճանապարհի երկայնական թեքությունները, եզրային և լայնական շարքերի տեղաշարժը բացառելու նպատակով, ճանապարհի այն հատվածներում, որտեղ ջրահեռացման վաքեր և եզրաքարեր նախատեսված չեն, նախատեսվել են միաձույլ բետոնյա եզրաշարքեր միաձույլ B-20 դասի բետոնով: Հողային պաստառի կայունությունը և երթևեկության անվտանգությունը ապահովելու նպատակով նախագծով նախատեսված է ստորին և վերին հենապատերի կառուցում:

Նախագծային աշխատանքներն իրականացվել են համաձայն գործող նորմերի և տիպային նախագծերի՝ պահպանելով գոյություն ունեցող ճանապարհի պարամետրերը:

Հիմնվելով գեոդեզիական ակնադիտական, երկրաբանական, շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների ուսումնասիրությունների վրա՝ նախագծով նախատեսված է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները՝

1. Հողային պաստառի կառուցում:
2. Զրահեռացման համակարգի կառուցում:
3. Ճանապարհային հագուստի վերակառուցում (ասֆալտապատում):
4. Իջատեղերի իրականացում:
5. Մայթերի կառուցում:
6. Կողնակների իրականացում 0,6մ:
7. Ճանապարհի կահավորում (ճանապարհային նշաններ և գծանշում):

**Հաջակագիծ և երկայնական պրոֆիլ**



❖ Նախագծվող Բագրատաշեն բնակավայրի 7-րդ փողոցի հատակագիծը և երկայնական պրոֆիլը փոփոխության չեն ենթարկվել և երկարությունը կազմում է 308.3 զմ:

#### **Հողային պաստառի վերականգնում**

❖ Համաձայն նախագծի ընդունված հողային պաստառի կոնստրուկցիան և տիպերը բավարարում են գործող տեխնիկական նորմերին և պայմաններին:

❖ Նախատեսված է կատարել հանույթ 784.0 խմ:

Ճանապարհային վերակառուցման համար նախատեսված են հետևյալ հիմնական աշխատանքները՝

#### **Ճանապարհային հագուստ**

❖ Գոյություն ունեցող ասֆալտբետոնե ծածկի քանդում հմիջ=10սմ – 2283.32 քմ:

❖ Ավազակոպճային ենթահիմքի իրականացում h=12սմ – 2228.30 քմ:

❖ Խճավազային (C-5) հիմքի իրականացում և մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով h=20սմ – 2228.30 քմ:

❖ Խոշորահատիկ ա/բ շերտի տեղադրում h=6սմ - 2228.30 քմ:

❖ Մանրահատիկ ա/բ ծածկ h=4սմ Ե տիպի – 2228.30 քմ:

❖ Արհեստական անհարթության կառուցում մանրահատիկ ա/բետոնով h=7սմ – 105.60 քմ:

#### **Իջափռեր**

❖ Խճավազային (C-5) հիմքի իրականացում և մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով h=15սմ – 564.0 քմ:

❖ Խոշորահատիկ ա/բ շերտի տեղադրում h=6սմ – 64.0 քմ:

❖ Մանրահատիկ ա/բ ծածկ h=4սմ Ե տիպի – 64.0 քմ:

❖ Մանրահատիկ ա/բ ծածկ h=5սմ Ե տիպի – 500.0 քմ:

#### **Մայթեր**

❖ Բազալտե 15x30սմ եզրաքարերի տեղադրում – 69.7 զմ:

❖ 8x20սմ հավաքովի բետոնե եզրաշարի տեղադրում – 17.5 զմ:

❖ Ավազակոպճային հիմքի իրականացում h=12սմ – 27.4 քմ:

❖ Ավազային ա/բ ծածկ h=3սմ Ե տիպի – 27.4 քմ:

❖ Մայթերի սալարկում 6սմ բետոնե սալիկներով, h=9սմ ցեմենտավազային չոր խառնուրդի վրա – 68.6 քմ:

#### **Կողնակներ**

❖ Կողնակների ամրացում խճավազային C-4 խառնուրդով հմիջ=10սմ – 134.0 քմ:

#### **Ջրահեռացում**

❖ Ջրընդունիչների և ջրհորների կառուցում միաձույլ B-20 դասի բետոնով, մետաղական ցանցի տեղադրմամբ:

❖ D=300մմ պոլիէթիլենային ծալքավոր խողովակաշարի տեղադրում – 100.0 զմ:

❖ L=1.0 մ երկարության Ե-2-20 ե/բ վաքերի տեղադրում – 477.0 հատ:

❖ Միաձույլ ե/բետոնե 30x34սմ վաքի կառուցում մետաղական ցանցի տեղադրմամբ – 529.0 զմ:

❖ Պր-4 հավաքովի ե/բ վաքերի տեղադրում մետաղական ցանցի տեղադրմամբ – 54.0 զմ:

#### **Հենապատեր**

❖ Հենապատի նորոգում միաձույլ ամրանավորված B-20 դասի բետոնով – 5.9 խմ:

❖ Վերին և ստորին հենապատերի հիմքի և իրանի կառուցում B-20 դասի խամքարաբետոնից – 103.98 խմ:

❖ d=110x3,2մմ PVC դրենաժային խողովակների տեղադրում:

#### **Ճանապարհի կահավորում (ճանապարհային նշաններ և գծանշում)**

##### **ա) ճանապարհային նշաններ**

Երթևեկության կազմակերպման և անվտանգության նպատակով նախատեսված են ճանապարհային նոր նշանների տեղադրում 27 հատ ԳՕՍՍ Ռ-52290-2004 պետական ստանդարտի:

##### **բ) Երթևեկելի մասի գծանշում**

Երթևեկային մասի գծանշումը նախատեսված է իրականացնել թերմոպլաստով h=3մմ, ԳՕՍՍ Ռ-51256-2018: Գծանշման ընդհանուր մակերեսը կազմում է՝ 126.35 քմ:

Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների տեղերը և ծավալները բերված են համապատասխան գծագրերում և ամփոփագրերում:



Նախագիծը իրականացված է ՀՀ-ում ներկայիս գործող նախագծման, քաղաքաշինական և սանիտարական նորմերին և կանոններին /ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում», ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն», ՀՀՇՆ 52-01- «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ», ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ», ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկական շինարարությունում» և ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում»/ համապատասխան:

Ներկայացված է նախահաշիվ 87799,8 հազ. դրամ գումարով:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նախահաշվային փաստաթղթերը, «Արման-Երեմ» ՍՊԸ-ն նշում է, որ այն կազմված է ՀՀ կառավարության առ 23.06.2011թ. N879-Ն որոշումով հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի» համաձայն:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2534.58 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 3034.86:

Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 274368 դրամ: Նյութերի արժեքն ընդունված է 2026թ. Nթ «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով: Լիմիտավորված ծախսերը հաշվարկված է ըստ տվյալ պահին գործող նորմատիվների:

Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

Շինարարական նյութերի արժեքին տրված է՝

- |  |         |
|--|---------|
| 1. Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից            | - 1.132 |
| 2. Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից                | - 1.05  |
| 3. Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից | - 1.02  |

Դիտարկելով ներկայացված նյութերը «Արման-Երեմ» ՍՊԸ-ն նշում է՝


Փորձաքննության ներկայացված նախագծման նախահաշվային փաստաթղթերին վերաբերվող մեր կողմից նկատված դիտողությունները և առաջարկությունները ներկայացվել է նախագծային կազմակերպությանը, որոնք հաշվի են առնվել փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով:

#### *Եզրակացություն*

Նոյեմբերյան համայնքի Բազրատաշեն բնակավայրի 7-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքների նախագծման նախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախահաշվային արժեքը կազմում է 87799,8 հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ:

Փորձագետ՝



Ա. Շիշանյան